# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

**2025**

ՀՈՒԼԻՍ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

## Ա ՄԱԿԱՐԴԱԿ

**1** Ե՞րբ է Թորոս I–ը մահապատժի ենթարկել Մանդալեի որդիներին։

1) 1109 թ.
2) 1114 թ.
3) 1111 թ.
4) 1107 թ.

**2** Ե՞րբ է Կիպրոսի արտաքին գործերի նախարար Կիպրիանուն ՄԱԿ–ի ամբիոնից կոչ արել քննարկելու Հայկական հարցը։

1) 1965 թ. հոկտեմբերին
2) 1970 թ. հունիսին
3) 1965 թ. ապրիլին
4) 1967 թ. ապրիլին

**3** Ո՞ր թվականին են հայ հայդուկները վրեժխնդիր եղել Աղբյուր Սերոբի համար՝ սպանելով քուրդ ցեղապետ Բշարե Խալիլին։

1) 1898 թ.
2) 1901 թ.
3) 1900 թ.
4) 1899 թ.

**4** Ե՞րբ է ստեղծվել մանրանկարներով զարդարված և մեզ հասած առաջին ամբողջական ձեռագիրը։

1) 851 թ.
2) 898 թ.
3) 989 թ.
4) 869 թ.

**5** Լիտվայի Հանրապետությունը ՀՀ–ի անկախությունը ճանաչել է՝

1) 1991 թ. դեկտեմբերի 8–ին
2) 1991 թ. դեկտեմբերի 21–ին
3) 1992 թ. ապրիլի 2–ին
4) 1991 թ. նոյեմբերի 21–ին

**6** Ո՞ր թվականին հայկական բանակը նվաճեց Պտղոմայիս քաղաքը։

1) Ք. ա. 84 թ.
2) Ք. ա. 71 թ.
3) Ք. ա. 74 թ.
4) Ք. ա. 69 թ.

**7** Ե՞րբ է Թեոդորոս Ռշտունին վերամիավորել Հայաստանը:

1) 639 թ.
2) 644 թ.
3) 642 թ.
4) 643 թ.

**8** Ե՞րբ է Մխիթար սպարապետը թուրքերին պարտության մատնել Օրդուբադում:

1) 1727 թ.
2) 1728 թ.
3) 1729 թ.
4) 1730 թ.

**9** Որքա՞ն էր Վանի թագավորության զինված ուժերի ընդհանուր թիվն ըստ «Սարդուրյան տարեգրության»:

1) 120 հազար
2) 350 հազար
3) 420 հազար
4) 300 հազար

**10** XIV դ. վերջերից ո՞ր վանքը դարձավ Աղվանից կոչվող եկեղեցու կաթողիկոսանիստը:

1) Դադիվանքի
2) Գանձասարի
3) Աղուենի
4) Ամարասի

**11** Քանի՞ գավառ ուներ Վասպուրական նահանգը:

1) 41
2) 20
3) 37
4) 34

**12** Ո՞վ է գլխավորել Բաքվի հայերի ինքնապաշտպանությունը հայ–թաթարական ընդհարումների ժամանակ:

1) Համազասպը
2) Քեռին
3) Վարդանը
4) Նիկոլ Դումանը

**13** Ո՞ւմ զորաջոկատն է XIX դ. առաջին կեսի ռուս–թուրքական երկրորդ պատերազմի ընթացքում կռվել Կովկասյան ճակատի Երևան–Բայազետ ուղղությամբ:

1) Վ. Բեհբութովի
2) Ա. Ճավճավաձեի
3) Ի. Պասկևիչի
4) Վ. Մադաթովի

**14** Ո՞վ էր Զեյթունի 1862 թ. ապստամբության ընդհանուր ղեկավարը:

1) Կարապետ Բասիլոսյանը
2) Ասատուր Նորաշխարհյանը
3) Մկրտիչ Յաղուբյանը
4) Նազարեթ Չավուշը

**15** Խորհրդային Հայաստանում 1937 թ. վերջի դրությամբ որքա՞ն եկեղեցի էր փակվել:

1) 700
2) 800
3) 900
4) 1200

**16** Ո՞վ էր Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի առաջին նախագահը:

1) Ալեքսանդր Մյասնիկյանը
2) Սարգիս Կասյանը
3) Սահակ Տեր-Գաբրիելյանը
4) Սարգիս Լուկաշինը

**17** Ո՞ր փաստաթղթից են մեջբերված խոսքերը:

*«Յո՛ւյց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգա ստրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարվում են մեր անկապտելի իրավունքները»:*

1) Խրիմյան Հայրիկի կոչից
2) Արամ Մանուկյանի կոչից
3) Եվրոպայի հայ ուսանողների միության հեռագրից
4) Հայոց ազգային բյուրոյի կոչից

**18** Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը:

*«Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:*

1) Յակով Զարոբյանը
2) Ալեքսանդր Բեկզադյանը
3) Ասքանազ Մռավյանը
4) Գրիգոր Հարությունյանը

**19** **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները։**

ա. Սյունիքում և Արցախում կազմավորված կիսանկախ իշխանությունները կոչվել են սղնախներ։

բ. 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի օրերին մի խումբ հայ մտավորականների մշակած ազատագրական նախագծի համաձայն՝ ռուսական կայսր Նիկոլայ II–ը կրելու էր նաև «Հայոց թագավոր» տիտղոսը։

գ. Կովկասում 1844 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն։

դ. Արևելյան Հայաստանի տարածքում ռուսական իշխանությունների ստեղծած և մոտ 40 տարի գոյություն ունեցած վարչական միավորը կոչվում էր Կարսի նահանգ։

ե. Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան Կալան ռուս մեծ գրող Ա. Պուշկինն անվանել է «Արզրումի բանալի»։

զ. 1844 թ. Կ. Պոլսում ստեղծված և հայ համայնքի գործերի կազմակերպմանը որոշ չափով մասնակցություն ունեցող մարմինը կոչվում էր Ազգային ժողով։

1) ա, գ, ե
2) գ, ե, զ
3) ա, բ, զ
4) բ, գ, դ

**20** **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է սխալ։**

1) Արևմտյան քաղաքակրթության հետ շփումների խորացման արդյունքում հայերին երբեմն կոչում էին Ասիայի եվրոպացիներ։
2) Բեհիսթունյան արձանագրության էլամերեն բաժնում Հայաստանը կոչվում էր Հարմինույա։
3) Արտաշեսյանների գահակալության ամբողջ ժամանակաշրջանում Մեծ Հայքի արքայի կրած տիտղոսը կոչվում էր «Արքայից արքա»։
4) Տիգրան Մեծի կրտսեր եղբայր Գուրասի պաշտոնի անվանումն էր Հյուսիսային Միջագետքի փոխարքա։

**21** **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառները:**

ա. Ս. Կիրովի սպանությունը պատճառ հանդիսացավ տրոցկիստների ազատ գործունեության համար:
բ. 1949 թ. Հայաստանից 3500 սփյուռքահայերի՝ Ալթայի երկրամաս արտաքսվելու իրական պատճառը նրանց անդամակցությունն էր «Դաշնակցություն» կուսակցությանը:
գ. Խորհրդա–թուրքական 1925 թ. պայմանագրի դենոնսացիան պայմանավորված էր Երկրորդ աշխարհամարտում Թուրքիայի՝ Գերմանիային փաստացի դաշնակցելով:
դ. Ա. Խանփերյանցի ձերբակալման պատճառը դավաճանությունն էր հայրենիքին:
ե. Սառը պատերազմը պատճառ հանդիսացավ, որ ԽՍՀՄ ղեկավարությունը հրաժարվի Թուրքիայից հայկական հողերի պահանջներից:

1) ա, ե
2) բ, դ
3) գ, ե
4) բ, գ

**22** **Ի՞նչ հետևանք ունեցավ Կիլիկյան Հայաստանում ունիթորների և հակաունիթորների պայքարը:**

1) Խախտեց Կիլիկիայի հասարակության միասնությունը և թուլացրեց երկիրը:
2) Ամրապնդեց թագավորի իշխանությունը:
3) Նախադրյալներ ստեղծեց առաջադիմական ուժերի հաղթանակի համար:
4) Ամրապնդեց հոգևորականության դիրքերը հայոց պետությունում:

**23** **Հայ քաղաքական կյանքի հետ կապված իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ և գտե՛ք ճիշտ տարբերակը:**

ա. ՀՅԴ կուսակցության ստեղծումը
բ. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը
գ. Արմենական կուսակցության ստեղծումը
դ. «Հայասեր-ազգասեր» խմբակի ստեղծումը
ե. Հնչակյան կուսակցության պառակտումը երկու թևի

1) բ, դ, գ, ե, ա
2) բ, գ, դ, ե, ա
3) դ, բ, գ, ա, ե
4) բ, դ, գ, ա, ե

**24** **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը։**

ա. Արտավազդ V-ի գահակալելը Մեծ Հայքում
բ. Կարակալլա կայսեր կողմից Հայոց արքայի ձերբակալումը
գ. Սասանյանների գահակալման սկիզբը Պարսկաստանում
դ. Վաղարշ II-ի զոհվելը
ե. Խոսրով II–ի գահակալելը Մեծ Հայքում
զ. Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նիգերի սպանվելը

1) ա
2) բ
3) դ
4) գ

**25** **Կատարե՛ք համապատասխանեցում և գտե՛ք ճիշտ տարբերակը։**

***Անուն***

1. Կարապետ Սիմոնյան
2. Սիմոն Զաքյան
3. Նելսոն Ստեփանյան
4. Գևորգ Վարդանյան
5. Նվեր Սաֆարյան

***Փաստ***

ա. հայկական 89–րդ դիվիզիայի հրամանատարը 1943 թ. փետրվարից
բ. ԽՍՀՄ կրկնակի հերոս
գ. Երկրորդ աշխարհամարտում առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
դ. հայկական 390–րդ դիվիզիայի հրամանատար
ե. Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
զ. ԽՍՀՄ հերոս, լեգենդար հետախույզ

1) 1–ե, 2–գ, 3–բ, 4–զ, 5–ա
2) 1–ե, 2–ա, 3–բ, 4–գ, 5–դ
3) 1–գ, 2–դ, 3–զ, 4–ա, 5–բ
4) 1–գ, 2–դ, 3–բ, 4–զ, 5–ա

**26** **Հուստինիանոս I–ի հրապարակած օրենքով Արևմտյան Հայաստանում ստեղծված նահանգների կենտրոնները համապատասխանեցրե՛ք նահանգներին և գտե՛ք ճիշտ տարբերակը:**

| | |
|---|---|
| 1. Առաջին Հայք | ա. Մելիտինե |
| 2. Երկրորդ Հայք | բ. Մարտիրուպոլիս |
| 3. Երրորդ Հայք | գ. Հուստինիանուպոլիս |
| 4. Չորրորդ Հայք | դ. Կեսարիա |
| | ե. Սեբաստիա |

1) 1–գ, 2–ե, 3–ա, 4–բ
2) 1–բ, 2–ե, 3–դ, 4–գ
3) 1–գ, 2–ա, 3–ե, 4–բ
4) 1–գ, 2–դ, 3–ա, 4–բ

**27** **Ընտրե՛ք երկու ճիշտ պնդումները:**

ա. Ք. ա. IX դ. 80–70–ական թթ. Հայկական լեռնաշխարհում հիշատակվող պետական կազմավորումներից նշանավոր էին հարավում՝ Նաիրին, իսկ արևմուտքում՝ Հայասան:
բ. Ք. ա. 849–836 թթ. ընթացքում ասորեստանյան աղբյուրներում անվանապես հիշատակվող Արամուն առաջին ուրարտական արքան էր:
գ. Հայկական լեռնաշխարհում առաջացած պետական կազմավորումներից Նաիրի թագավորությանը հաջողվել է Ք. ա. 850–ական թվականներից սկսած՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհը միավորել իր իշխանության ներքո:
դ. Հայկական լեռնաշխարհի տարածքում Ք. ա. 830–ական թթ. ձևավորվել էին մի քանի համադաշնություններ, որոնցից ամենամեծը Արարատյան դաշտում, Սևանա լճի ավազանում, Սյունիքում և հարակից շրջաններում տարածվող Էթիունի երկրի համադաշնությունն էր:
ե. «Ուրարտու»-ն դարձել էր Հայաստանի ընդհանրական անվանումը, ուստի ասորեստանյան աղբյուրները շարունակեցին այդ անունով կոչել նաև Նաիրի թագավորությունը:

1) բ, ե
2) դ, ե
3) ա, գ
4) գ, դ

**28** Ո՞ր թվականներով են թվագրվում Վանի թագավորության մեզ հասած հնագույն արձանագրությունները:

1) Ք. ա. VIII դ. 80–ական թվականներ
2) Ք. ա. IX դ. 30–ական թվականներ
3) Ք. ա. VIII դ. 90–ական թվականներ
4) Ք. ա. IX դ. 10–ական թվականներ

**29** Դրոյի և Նժդեհի ջոկատները Զանգեզուրից մտել են Արցախ՝

1) 1919 թ. ապրիլին
2) 1919 թ. հոկտեմբերին
3) 1918 թ. հոկտեմբերին
4) 1920 թ. ապրիլին

**30** Ո՞վ է Հայաստանից մասնակցել Նիկեայի առաջին տիեզերական ժողովին:

1) Գրիգոր Լուսավորիչը
2) Վրթանես Ա Պարթևը
3) Գրիգորիսը
4) Արիստակեսը

**31** Ո՞վ էր Արատտայի հովանավոր աստվածը:

1) Հայկ
2) Արա
3) Հայոս
4) Հայ(ա)

**32** Ո՞ւմ ընդունած կոչից է մեջբերված հատվածը:

*«Թուրքիայի կորստաբեր պահանջները և վիրավորական տմարդությունը վերջապես ազդեց հայ ժողովրդի հոգու վրա: Այժմ, գոնե, պարզվում է, որ մենք մեր հույսը պիտի կապենք մեր խիզախության հետ: . . . Վերջին պատերազմական ու քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել: Այսօր այդ հիվանդությունը բուժվում է, հին խիզախությունը վերածնվում է, և այդ փրկության միակ իրական ելքն է մեր դժվարին պայմաններում ու ժամանակներում»:*

1) Հայաստանի ապահովության խորհրդի
2) Երևանի Հայոց ազգային խորհրդի
3) Արևմտահայերի ազգային խորհրդի
4) Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի

**33** **Ընտրե՛ք հայոց թագավորի խոսքի ճիշտ շարունակությունը:**
***«Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, . . . »***

1) որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս:
2) որովհետև դու ինձ խաբեությամբ ես կալանավորել:
3) որովհետև դու ինձ խաբեությամբ ես դուրս բերել Հայոց տանից:
4) որովհետև դու ինձ խաբեությամբ ես հեռացրել Հայոց տանից:

**34** **Ո՞ւմ մասին է խոսքը մեջբերված հատվածում.**

*«. . .* [Նա] *Ուրարտուի անցյալի առաջին հետազոտողներից մեկն է, շատ լավ նկատել ու ընդգծել է ասուրական վայրենի ոգու և Ուրարտուի շատ ավելի մեղմ ու մարդկային ոգու միջև եղած հակադրությունը»:*

1) Գլինկայի
2) Ադոնցի
3) Նիկոլսկու
4) Մառի

**35** **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են սխալ:**

1. Խորհրդային իրականությունն առանց ուժային միջոցների, գաղափարական ճանապարհով փոփոխելու պայքարի ուղին ընտրած մարդկանց կոչում էին այլախոհներ:
2. Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:
3. Ազգային միացյալ կուսակցության 1970 թ. ձևավորված ղեկավար մարմինը՝ խորհուրդը, որդեգրեց մի ռազմավարություն, որը կոչվում էր «Անկախություն՝ հանրաքվեի ճանապարհով»:
4. 1991 թ. գարնանը ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Գետաշեն և Մարտունաշեն գյուղերում խորհրդային բանակի հետ համագործակցությամբ ադրբեջանական իշխանությունների իրականացրած գործողությունը կոչվում էր «Կոլցո»՝ «Օղակ»:
5. Երևանում 1988-1990 թթ. տեղի ունեցած հանրահավաքների վայր Թատերական հրապարակն այժմ կոչվում է Ազատության հրապարակ:
6. 1989 թ. դեկտեմբերի 1–ին Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված որոշումը վերնագրված էր «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»:

**36** **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները։**

1. Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները հայտնի են նաև բուն Աղվանք անունով։
2. Կիլիկիայի հայոց պետության կառավարման գլխավոր մարմինը կոչվում էր արքունի ժողով։
3. Միջնադարյան Հայաստանի քաղաքների արտաքին պարսպով շրջապատված հիմնական մասը՝ բուն քաղաքը կոչվում էր արվարձան։
4. Հռոմեական կայսրությանը 387 թ. բաժանումից հետո անցած Մեծ Հայքի արևմտյան մասի կառավարիչները կոչվում էին կոմեսներ։
5. Կիլիկյան Հայաստանում սպարապետի անմիջական տեղակալը կոչվում էր մարաջախտ։

**37** **Գտե՛ք ճիշտ տարբերակները։**
***Եվրոպական տերությունները 1894–1896 թթ. հայերին պաշտպանելու եռանդուն ջանքեր էին գործադրում, որովհետև՝***

1. Գերմանիայի ծրագրերում ուրվագծվում էր Բեռլին–Բաղդադ երկաթգծի շինարարության հեռանկարը։
2. Հանուն երկաթգծի շինարարության՝ Գերմանիան պատրաստ էր զոհաբերելու դրա ճանապարհին կանգնած արևելահայության կենսական շահերը։
3. Ֆրանսիան ձգտում էր ամրապնդել իր ազդեցությունը Միջագետքում։
4. Անգլիան ձգտում էր չվնասել Թուրքիայում կատարած իր ֆինանսական ներդրումները։
5. Ռուսաստանը ջանք չէր խնայում Արևմտյան Հայաստանում, սևծովյան նեղուցներում ու Բալկաններում Անգլիայի ուժեղացումը կանխելու համար։
6. Ավստրո-Հունգարիան ձգտում էր Անգլիային դուրս մղել Անդրկովկասից։

**38** **Թվարկվածներից որո՞նք Արտաշես I–ի բարեփոխումների հետևանքներ չեն։**

1. Կարգավորվեցին արքունի գործակալությունները։
2. Պահպանվեց նախկին վարչական բաժանումը։
3. Օրինականացվեցին ազարակատերերի՝ մինչ այդ կատարած հողային զավթումները։
4. Գյուղական համայնքները հետ ստացան ազարակատերերի կողմից զավթված հողերը։
5. Պահպանվեց համայնքի հողային սեփականությունը։
6. Զորքը բաժանվեց չորս զորավարությունների։

**39** **Թվարկվածներից որո՞նք են 1914 թ. ռուս–թուրքական համաձայնագրի պայմաններից:**

1. Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծվելու էր հատուկ գեներալ–նահանգապետություն:
2. Հատուկ գեներալ–նահանգապետությունը կառավարելու էր գեներալ–կոմիսարը՝ իր երկու օգնականների միջոցով:
3. Հողային հարցերը պետք է վճռվեին գեներալ-կոմիսարի անմիջական վերահսկողությամբ:
4. Յոթ նահանգներից ձևավորվելու էր երկու վարչական միավոր՝ Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր կազմերով:
5. Ստեղծված վարչական միավորները կառավարվելու էին երկու տեղացի ընդհանուր տեսուչների կողմից:
6. Տեսուչներն իրավունք էին ստանում նշանակելու և պաշտոնանկ անելու ապաշնորհ կամ օրինազանց պաշտոնյաներին:

**40** **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1. Հայ նախարարները Հազկերտ II–ի պահանջով Տիզբոն ժամանեցին 450 թ. ապրիլին:
2. Հռոմից օգնություն չստանալով՝ Վասակ Սյունին ծրագրել էր հաշտվել պարսից արքունիքի հետ:
3. Ավարայրի ճակատամարտում Թաթուլ Վանանդեցին հայոց զորքի երկրորդ գնդի հրամանատարն էր:
4. Ավարայրի ճակատամարտում պարսիկների զորքի թիվը կրկնակի ավել էր հայկական զորքի թվից:
5. Պարսից արքան իր մոտ պատանդ պահեց Աղձնիքի բդեշխ Աշուշային և Վասակ Սյունու երկու որդիներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին:
6. Ղևոնդ երեցը Ավարայրի ճակատամարտի նախօրեին մկրտեց մինչ այդ չմկրտված զինվորներին:

**41** **Թվարկվածներից ո՞րն է խախտում իրադարձությունների տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1. մոնղոլ պատվիրակների սպանությունը անեցիների կողմից
2. Կարսի և Դվինի գրավումը մոնղոլների կողմից
3. Շամքոր քաղաքի գրավումը մոնղոլների կողմից
4. Կարինի գրավումը մոնղոլների կողմից
5. Չմանկատուկի ճակատամարտը
6. Տարոնի, Վասպուրականի և Աղձնիքի ենթարկվելը մոնղոլներին

**42** **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը
2. ԼՂՀ Գերագույն խորհրդի հատուկ որոշման ընդունումը բոլոր զինված ջոկատները ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր կոչելու մասին
3. Լաչինի ազատագրումը հայկական ուժերի կողմից
4. «Հարսանիք լեռներում» գործողությունն սկսելու մասին որոշման ընդունումը
5. Հայ ազատամարտի նվիրյալ Մոնթեի զոհվելը

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

**43** **Արքաների անունները համապատասխանեցրե՛ք նրանց հետ կապված իրադարձություններին։**

Ա. Տիգրան IV
Բ. Արտավազդ III
Գ. Արտաշես II
Դ. Արտավազդ I
Ե. Տիգրան III

| Ա | Բ | Գ | Դ | Ե |
|---|---|---|---|---|
| | | | | |

1. Նա Հայոց թագավորությունը կառավարում էր հռոմեական օրենքներով և զբաղվում անզուսպ թալանով:
2. Նա օգնական ուժեր չուղարկեց Մարկոս Կրասոսին։
3. Զոհվեց Մեծ Հայքի տարածք ներխուժած սարմատական քոչվոր ցեղերի դեմ մղված ճակատամարտում:
4. Պարթևստանի դեմ պայքարում պահպանեց Հայաստանի անկախությունը, բայց իր եղբորորդուն ստիպված էր պատանդ տալու պարթևներին:
5. Նրա ինքնուրույն քաղաքականության ապացույց էր պահլավերեն մակագրությամբ դրամների թողարկումը:
6. Հռոմի դաշնակից Ատրպատականի թագավորությունը միացրեց Մեծ Հայքի թագավորությանը:

**44** **Կրթական հաստատությունները համապատասխանեցրե՛ք հիմնադրման վայրերին։**

Ա. Զմյուռնիա
Բ. Վենետիկ
Գ. Ախալցխա
Դ. Կ. Պոլիս
Ե. Աստրախան

1. Գևորգյան ճեմարան
2. Սկյուտարի դպրոց
3. Կարապետյան դպրոց
4. Աղաբաբյան դպրոց
5. Ռափայելյան դպրոց
6. Մեսրոպյան դպրոց

| Ա | Բ | Գ | Դ | Ե |
|---|---|---|---|---|
| | | | | |

**45** **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը։**

1. Հայ ժողովրդական կուսակցությունը որոշ վերապահությամբ կողմ էր միացյալ և անկախ Հայաստանի ստեղծմանը։
2. Միացյալ Հայաստանի հռչակագիրը վճռական քայլ էր հայության երկու հատվածների մերձեցման համար, բայց այն արտաքին քաղաքական որևէ նշանակություն չունեցավ։
3. Սան Ռեմոյի կոնֆերանսը հավանություն տվեց միացյալ հայկական պետության ստեղծմանը, սակայն դաշնակիցները շարունակում էին հարցը կապել Ֆրանսիայի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու խնդրի հետ։
4. Բոլոր կուսակցությունները, այդ թվում՝ բոլշևիկները, ազգի և պետության համար ճակատագրական ու վճռական պահերին թիկունք էին կանգնում Հայաստանի առաջին հանրապետության կառավարությանը։
5. Հաճընի 1920 թ. ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր Պետրոս Սարաճյանը, պաշտպանության ուժերի հրամանատարը՝ Սարգիս Ճեպեճյանը։
6. Արամ Մանուկյանը 1918 թ. մարտի 24-ին հաստատվել էր Երևանի նահանգի դիկտատոր։

## Բ ՄԱԿԱՐԴԱԿ

**46** **Գտե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

ա. Ամբողջ միջնադարի ընթացքում միայն Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը կարգավորող նվիրապետական աթոռը կոչվում էր Աղթամարի կաթողիկոսություն:
բ. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
գ. Պարսից արքայի և բյուզանդական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրն անվանել են «ամոթալի»:
դ. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Խորագոյն Հայք»:
ե. Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին սեպուհներ:
զ. Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ոչ մահմեդականներից գանձվող հարկը կոչվում էր ծխահարկ:
է. Վաղ քրիստոնեական պաշտամունքային շինությունները հայտնի են բազիլիկ տաճարներ անունով:

1) ա, ե, զ
2) բ, դ, զ
3) ա, դ, է
4) բ, ե, է

**47** **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները:**

ա. Արգիշտի Ի–ի զորքերը Զագրոսյան լեռներով հասել են մինչև Պարսուա, որը հետագայում կոչվել է Պարսկահայք:
բ. Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանված էր միավորների, որոնք կոչվում էին մարզեր:
գ. Արարատյան համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
դ. Արամազդը երկրի և երկնքի արարիչ, մարդկանց բարօրություն, լիություն ու արիություն շնորհող աստվածն էր:
ե. Վահագնը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն էր:
զ. Աստղիկը հայոց դիցարանում մեծարվել է «Ոսկեմայր» տիտղոսով:
է. Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր սատրապ:

1) ա, զ, է
2) բ, դ, ե
3) ա, զ, է
4) բ, ե, զ

**48** **Թվարկվածներից որո՞նք են Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման արդյունքներ:**

ա. Երկրորդ հնգամյակի տարիներին կառուցվեց 18 արդյունաբերական ձեռնարկություն:
բ. Վանաձորը դարձավ պղնձարդյունաբերության կենտրոն:
գ. Հիմնադրվեց քիմիական արդյունաբերությունը:
դ. Երևանում կառուցվեց արհեստական կաուչուկի ԽՍՀՄ առաջին գործարանը:
ե. Կապանը դարձավ ոսկու արդյունահանման կենտրոն:
զ. Բանվորների թիվն աճեց և 1940 թ. կազմեց 192 400:
է. Առաջին երկու հնգամյակների տարիներին կառուցվեց 44 արդյունաբերական ձեռնարկություն:

1) բ, գ, զ
2) ա, գ, է
3) գ, դ, է
4) ա, դ, ե

**49** **Թվարկվածներից որո՞նք են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հետևանքներ:**

ա. Հայկական կողմի տարած հաղթանակները ստիպեցին թուրքական կողմին Բաթումի բանակցություններում մեղմացնել իրենց պահանջները:
բ. Դրական դեր խաղաց թուրքերի դեմ պայքարում Անդրկովկասի ժողովուրդների փոխհամաձայնեցված ու համատեղ պայքարը խրախուսելու համար:
գ. Ճակատամարտերը հնարավորություն տվեցին թուրքական զորքերին առանց դիմադրության գրավելու Բաքուն:
դ. Հերոսամարտերից հետո թուրքական զորքերը սրընթաց առաջ շարժվեցին և գրավեցին նաև Թիֆլիսը:
ե. Նորահռչակ հայկական պետությունը փաստացի դարձավ Առաջին աշխարհամարտի մասնակից և այս հիմքի վրա իրավական (դե յուրե) ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից:
զ. Հերոսամարտերով դրվեց ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:
է. Թուրքիան նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ Բաքվում 1918 թ. հունիսի 4–ին կնքեց հաշտության պայմանագիր:

1) ա, դ, ե
2) ա, ե, զ
3) բ, գ, ե
4) ա, զ, է

**50** **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը։**

ա. Հայաստանի կերպարվեստի թանգարանի կազմակերպումը
բ. Վիկտոր Համբարձումյանի՝ Աստղագետների միջազգային միության նախագահի պատվավոր պաշտոնի զբաղեցումը
գ. Գիտության և արվեստի ինստիտուտի գործունեության ավարտը
դ. ակադեմիկոս Հովսեփ Օրբելու նշանակվելը Արմֆանի նախագահ
ե. Լենինականի (Գյումրի) պետական թատրոնի հիմնումը
զ. էլեկտրոնային արագացուցչի շահագործման սկիզբը Հայաստանում
է. գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը
ը. «Նամուս» կինոնկարի ստեղծումը
թ. Խորհրդային Հայաստանի ճարտարապետների միության ստեղծումը

1) է
2) դ
3) բ
4) ե

**51** **Ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Երևանի գրավումը շահ Աբասի կողմից
բ. Բաղդադի գրավումը թուրքերի կողմից և թուրք–պարսկական պատերազմների ավարտը
գ. շահ Աբասի հարձակումը և Թավրիզի գրավումը
դ. շահ Աբասի հրամանով հայ բնակչության տեղահանության սկիզբը
ե. շահ Աբասի գահակալության ավարտը
զ. շահ Աբասի մուտքը Ջուղա
է. Կասրե-Շիրինի պայմանագրի կնքումը
ը. շահ Աբասի կողմից Այսրկովկասի ու Ատրպատականի զիջումը օսմանցիներին
թ. Նախիջևանի գրավումը շահ Աբասի կողմից
ժ. Ամասիայի հաշտության կնքումը Սեֆյան և Օսմանյան տերությունների միջև

1) դ
2) ա
3) զ
4) թ

**52** **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Մենուայի գահակալման ավարտը
բ. Սարդուրի I–ի գահակալման ավարտը
գ. Խուկանայի և խեթերի թագավորի միջև պայմանագրի կնքումը
դ. Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը
ե. «Նաիրի» երկրանվան հիշատակումը Սալմանասար I թագավորի կողմից
զ. Կարանի թագավորի դիմադրելը խեթերի արշավանքներին
է. «Ուրարտու»–ի վերջին հիշատակումը ասուրա–բաբելական արձանագրություններում
ը. Վանի թագավորության գրային բարեփոխումը
թ. Էրեբունի ամրոցի հիմնադրումը

1) ա
2) ը
3) դ
4) թ

**53** **Համապատասխանեցրե՛ք կաթողիկոսների գահակալման տարիները նրանց անուններին և գտե՛ք ճիշտ տարբերակը։**

ա. Վրթանես Ա Պարթև
բ. Ստեփանոս Հռոմկլայեցի
գ. Մեսրոպ Արտազեցի
դ. Ներսես Ա Պարթև
ե. Գյուտ կաթողիկոս
զ. Հովսեփ Ա Վայոցձորցի

1. 439–452 թթ.
2. 353–373 թթ.
3. 333–341 թթ.
4. 1290–1293 թթ.
5. 461–478 թթ.
6. 1359–1372 թթ.
7. 325–332 թթ.

1) ա–7, բ–3, գ–5, դ–1, ե–4, զ–2
2) ա–3, բ–4, գ–6, դ–2, ե–5, զ–1
3) ա–4, բ–3, գ–6, դ–2, ե–5, զ–1
4) ա–3, բ–4, գ–5, դ–2, ե–6, զ–1

**54** **Թվարկվածներից որո՞նք են վերաբերում Գագիկ I Բագրատունու գործունեությանը:**

ա. Անիի թագավորությանը միացրեց Դվինի և Խլաթի ամիրայությունները:
բ. Բագրատունյաց տերությանը միացրեց Ծաղկոտն և Կոգովիտ գավառները:
գ. Ճնշեց Տայքի Դավիթ Կյուրապաղատի անհնազանդությունը:
դ. Ամբողջ Արցախը միավորեց իր թագավորությանը:
ե. Հայկական զորքը նրա օրոք դարձավ հզոր ուժ, և հետևողականորեն ընդարձակվեցին պետության սահմանները:
զ. Նրա կինը՝ Կատրամիդե թագուհին, Զորագետի հովտում հիմնեց Սանահինի և Հաղպատի վանքերը:
է. Հայկական տարածքների մեծ մասը փաստորեն միավորվեց Բագրատունիների կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:

1) բ, ե, է
2) գ, դ, ե
3) ա, բ, զ
4) գ, ե, է

**55** **Տրվածներից որո՞նք չեն վերաբերում Շահամիր Շահամիրյանի կազմած հայկական պետականության վերականգնման նախագծին:**

ա. Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը հռչակել հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով
բ. Հայաստանում 20 տարի ժամկետով տեղակայել 6–հազարանոց ռուսական զորք
գ. Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան
դ. Հայաստանի և Ռուսաստանի միջև սահմանել ազատ երթևեկություն
ե. Հայոց թագավորին ընտրել ռուսական կայսրի կողմից, իսկ այնուհետև օծել Էջմիածնում
զ. Պետերբուրգում ունենալ Հայաստանի կառավարության դեսպան
է. Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին

1) ա, գ, է
2) բ, ե, զ
3) գ, ե, է
4) բ, դ, զ

**56** **Ընտրե՛ք այն երեք պայմանները, որոնք տեղ են գտել Տիգրան Մեծի և Գոդերձ II–ի միջև կնքված հայ–պարթևական հաշտության պայմանագրում:**

ա. Հռոմի դեմ Պարթևստանի պատերազմելու դեպքում Տիգրան Մեծը խոստանում էր օգնական ուժեր տրամադրել Գոդերձ II–ին:
բ. Հօգուտ Պարթևստանի՝ Հայաստանը հրաժարվում էր Ասորիքից և Պաղեստինից:
գ. Պարթևստանը վերադարձնում էր Հայաստանից խլած Յոթանասուն հովիտները:
դ. Պարթևների արքան կորցնում էր «արքայից արքա» տիտղոսը, որն այնուհետև կրելու էին Տիգրանն ու իր հաջորդները:
ե. Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Կապադովկիայի վրա, որի տարածքը ստանալու էր Հայաստանը, իսկ շարժական գույքն ու բնակչությունը՝ Պարթևստանը:
զ. Հօգուտ Հայաստանի՝ պարթևները հրաժարվում էին Հյուսիսային Միջագետքից և Մարաստանից:
է. Օսրոյենեն, Ադիաբենեն և Միգդոնիան հետ ստանալու դիմաց Պարթևստանը ճանաչում էր Տիգրան Մեծի գերիշխանությունը:

1) ա, բ, զ
2) գ, դ, ե
3) բ, ե, է
4) գ, դ, զ

**57** **Կատարե՛ք համապատասխանեցում և գտե՛ք ճիշտ տարբերակը:**

| *Ղեկավար* | *Ինքնապաշտպանության վայր* |
|---|---|
| 1. Բաղդիկ Սիմոնյան | ա. Մուսա լեռ (Սուետիա) |
| 2. Հայկակ Կոսոյան | բ. Վան՝ Այգեստան |
| 3. Հակոբ Կոտոյան | գ. Վան՝ Քաղաքամեջ |
| 4. Ղուկաս Տեռվլեթյան | դ. Ուրֆա |
| 5. Տիգրան Անդրեասյան | ե. Շապին Կարահիսար |
| 6. Մկրտիչ Յոթնեղբայրյան | զ. Թաղ |
| | է. Մուշ |

1) 1–զ, 2–գ, 3–բ, 4–ե, 5–ա, 6–դ
2) 1–է, 2–բ, 3–գ, 4–ե, 5–ա, 6–զ
3) 1–զ, 2–գ, 3–է, 4–ե, 5–ա, 6–դ
4) 1–գ, 2–ա, 3–է, 4–զ, 5–ե, 6–դ

**58** **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ նէպին:**

1. պարենմասնատրման փոխարեն պարենհարկի կիրառումը
2. վարձու աշխատանքի կիրառումից հրաժարումը
3. գյուղատնտեսական մթերքների բռնագրավումների ժամանակավոր դադարեցումը
4. արդյունաբերական ձեռնարկություններին զգալի ինքնուրույնություն տալը
5. շուկայական հարաբերությունների հիման վրա երկրի տնտեսության աշխուժացումը և զարգացումը
6. հարկի չափի որոշվելը մինչև ցանքսը և տարվա ընթացքում այն երեք անգամ փոփոխելը
7. մանր և միջին բոլոր ձեռնարկությունների ազգայնացումը
8. գների և առևտրի ազատականացումը
9. արտաքին առևտրի մենաշնորհից հրաժարումը

**59** **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են սխալ:**

1. Ցարական Ռուսաստանի կողմից Անդրկովկասում ստեղծված և Շամախի կենտրոնով վարչական միավորը կոչվում էր Կասպիական մարզ:
2. Հայկական պետականության վերականգնման այն նախագիծը, ըստ որի Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր խորհրդարանական հանրապետություն, հայտնի է «Հյուսիսային ծրագիր» անունով:
3. Ժամանակավոր կառավարության կողմից Արևմտահայաստանի գեներալ-կոմիսարին հասցեագրված գաղտնի փաստաթուղթը կոչվում էր «Ղեկավար հրահանգներ»:
4. Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կողմից կազմված և սուլթան Համիդ II–ին հանձնված նախագիծը ստացել էր «Մայիսյան բարենորոգումների ծրագիր» անունը:
5. Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չելլոներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում:
6. Մեծ Թուրանի ստեղծման պանթյուրքական ծրագրի իրագործման առաջին փուլը կոչվում էր թուրքիզմ, որը ենթադրում էր թուրքացնել Օսմանյան կայսրությունը, Կովկասի մեծ մասը և Թուրքմենստանը:
7. Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով–Դաշկովի պաշտոնի անվանումն էր Կովկասի փոխարքա:
8. Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար 1912 թ. հոկտեմբերին ստեղծված համազգային նոր մարմինը կոչվում էր Ազգային պատվիրակություն:
9. Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքն ընդգրկող և 1828 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Հայկական մարզ:

**60** **Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք չեն:**

1. Զարգացած միջնադարում կրթության առջև նոր պահանջներ դրվեցին, որովհետև հասարակությանն անհրաժեշտ էին ոչ միայն կրոնափիլիսոփայական, այլ նաև կիրառական գիտելիքներ ունեցող մարդիկ:
2. Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու ղեկավարության արդյունքում XIV դ. երկրորդ կեսին և XV դ. սկզբին բեղմնավոր գործունեություն ծավալեց Տաթևի համալսարանը:
3. Ուշ միջնադարում Հայաստանի տնտեսական ու քաղաքական ծանր կացությունը առանձնապես բացասական հետևանքներ թողեց մանրանկարչության բնագավառում:
4. Թեոդորոս Ռշտունուն ազատ արձակելու պատճառը Հայաստանը Բյուզանդական կայսրության ոլորտում պահելն էր:
5. Անին Արշակունիների օրոք եղել էր հայոց թագավորների հուղարկավորման վայրը, ուստի մայրաքաղաք հռչակվելով՝ ժամանակակիցների աչքում բարձրացրեց Բագրատունիների հեղինակությունը՝ որպես Արշակունիների ժառանգորդի:
6. Հայոց գրերի գյուտի անմիջական արդյունքում Հայաստանում սկսվեց կրթական և գիտական կյանքի վերելք:
7. Զարգացած միջնադարում հայկական տոմարագիտական մտքի նվաճումների արդյունքում հնարավոր դարձավ Հայոց մեծ թվականի սահմանումը:

**61** **Տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

1. Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր Միջագետքի տափաստաններում անհաջող ռազմական գործողություններ վարելու հանգամանքով:
2. Հայաստանը հռոմեացիների ավերածություններից և զոհերից զերծ պահելու համար Արտավազդ II–ը Ք. ա. 34 թ. որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
3. Երվանդ Սակավակյացը, նպաստելով Ասորեստանի կործանմանը, իր դաշնակից Բաբելոնի և Մարաստանի համաձայնությամբ ընդարձակեց թագավորության սահմանները՝ ներառելով Օսրոյենեն և Միգդոնիան:
4. Տիգրան Կրտսերն ընդվզել էր Պոմպեոսի դեմ և վիրավորել նրա արժանապատվությունը, ուստի Պոմպեոսի կարգադրությամբ ձերբակալվեց և ընտանիքի հետ գերեվարվեց Հռոմ:
5. Օգոստոս կայսեր հեռագնա ծրագիրը նպատակ ուներ միավորելու Հայաստանը Կապադովկիայի հետ և ստեղծելու միացյալ ուժեղ պետություն ընդդեմ Պարթևստանի:
6. Արտաշատի գրավման պատճառն այն էր, որ քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները, կաշառվելով Պոմպեոսի կողմից, հռոմեացիների առջև դավաճանաբար բացեցին դարպասները:
7. Արտաշատի հայ–հռոմեական պայմանագրի համաձայն՝ Հայաստանը պահպանեց իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում:
8. Արտավազդ II–ը օգնական զորքեր չուղարկեց Կրասոսին, քանի որ Օրոդես II–ի գլխավորած ուժերը հարձակվել էին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:

**62** **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1. Խորհրդային Միությանը բնորոշ էին իրական ժողովրդավարությունը, ազգերի ու հասարակության միլիոնավոր անդամների իրական հավասարությունը:
2. 1950–1982 թթ. ավելի շատ հայ է հայրենադարձվել Խորհրդային Հայաստան, քան Մեծ հայրենադարձության տարիներին:
3. Հայկական հարցի համար դիվանագիտական պայքարը 1920–ական թթ. սկզբին շարունակում էին Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի, ապա՝ Գ. Նորատունկյանի գլխավորությամբ, և Հայաստանի առաջին հանրապետության՝ իր գոյությունը շարունակող պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի նախագահությամբ:
4. Խորհրդային Հայաստանին Առաջին հանրապետությունից փոխանցվել էր հարևան չորս երկրների հետ տարածքային–սահմանային չլուծված խնդիրների «ժառանգությունը»:
5. Մոսկվայի 1921 թ. ռուս–թուրքական պայմանագրի՝ հայ–թուրքական սահմանին վերաբերող դրույթները օրինական չէին, որովհետև Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան առանց հայկական կողմի մասնակցության վճռեցին հայկական տարածքների հարցը:
6. Վերակառուցման շրջանում Խորհրդային Միությունում հետզհետե սրվող ազգային հարցին գործնական լուծում տալու փոխարեն Մոսկվան վարում էր երկդիմի և խուսանավելու քաղաքականություն:
7. Այլախոհները 1970–ական թթ. կեսերին են Հայաստանում ստեղծել իրենց առաջին կազմակերպությունները:

**63** **Թվարկվածներից որո՞նք են տեղ գտել հայ–մոնղոլական դաշինքի կնքման հետ կապված բանակցությունների օրակարգում:**

1. Հայերի բարեկամությունը շահելու համար մոնղոլները խոստացան վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից:
2. Մոնղոլները խոստացան հոգալ հայոց բանակի պահպանման ծախսերը:
3. Մոնղոլները համաձայնեցին պահպանել Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
4. Մոնղոլները պարտավորվեցին Կիլիկյան Հայաստանին միացնել Ասորիքի մի մասը:
5. Հայերը պարտավորվեցին օգնության խնդրանքով չդիմել Արևմուտքի քրիստոնյաներին:
6. Մոնղոլները պարտավորվեցին ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:
7. Երկու կողմերը պարտավորվում էին պահպանել չեզոքություն երրորդ երկրների հարձակման դեպքում:

**64** **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ։**

1. Հովհաննես Թութունջի վարդապետը մահտեսի Շահմուրատի հետ, հայկական պատվիրակության կազմում, 1683 թ. ժամանել էր Փարիզ։
2. Աղաբաբյան դպրոցը հատկապես մեծ ճանաչում է ձեռք բերել Սերովբե Վիչենյանի տեսուչ եղած ժամանակ։
3. Եղվարդ գյուղի մոտ 1736 թ. հունիսին տեղի ունեցած ճակատամարտում Նադիրի բանակը ծանր պարտության մատնեց օսմանցիների զորքերին։
4. Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը Հովհաննես Հունդիբեկյանի, Պողոս Քեչիբեկյանի և ուրիշների գլխավորությամբ տևել է երեք ամսից ավելի, իսկ այդ ընթացքում թուրքական բանակը կորցրել է ավելի քան 20 հազար զինվոր։
5. Լազարյան ճեմարանը ժամանակին եղել է Ռուսաստանյան կայսրության միակ արևելագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունը։
6. Հայտնի պատմաբան Լեոն պատմագրության մեջ պահպանողական ուղղության հետևորդ էր և գրել է Հայոց պատմության բոլոր շրջանների և հիմնախնդիրների մասին։
7. Պետերբուրգում 1809 թ. ռուսերենով լույս է տեսել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը։

**65** **Գտե՛ք այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը։**

1. Պարթևստանում Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը
2. հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի սկիզբը
3. Տարոն գավառում հայ ազնվականի՝ Կորբուլոնին սպանելու փորձը
4. փոքրաթիվ զորաջոկատով Տրդատի հեռանալը Ատրպատական եղբոր՝ Բակուրի մոտ
5. Արտաշատի ավերումը Կորբուլոնի կողմից
6. Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտում հռոմեացիների պարտությունը
7. Ներոն կայսեր կողմից իր պայմանի հայտնելը Վաղարշ I-ին՝ Տրդատի Հռոմ մեկնելու և թագն իրենից ստանալու մասին
8. Մծբինում հռոմեա-պարթևական զինադադարի կնքումը և Կորբուլոնի զորամասի դուրս գալը Տիգրանակերտից
9. Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնիում

**66** **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Սարգիս Զաքարյանի՝ ամիրսպասալարի պաշտոն ստանալը
2. Միրիոկեֆալոնի ճակատամարտը
3. Լևոն II–ի կողմից Անտիոք քաղաքի գրավումը
4. Մլեհի կառավարման ավարտը
5. Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» կազմումը
6. Կոտմանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտը
7. հայ–վրացական ուժերի կողմից Շահ–Արմենների նստավայր Խլաթի պաշարումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

**67** **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Անդրանիկի կամավորական ջոկատի կողմից Բիթլիսի գրավումը
2. հայկական կամավորական VIII ջոկատի ստեղծումը
3. Դրոյի կամավորական ջոկատի կողմից Խնուսի գրավումը
4. հայկական ջարդերի կապակցությամբ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հանդես գալը համատեղ հայտարարությամբ
5. Էրզրումի գրավումը ռուսական զորքի կողմից Առաջին աշխարհամարտի ժամանակ
6. Արարատյան գնդի ստեղծումը Վարդանի գլխավորությամբ
7. Համազասպի կամավորական ջոկատի կողմից Խիզանի գրավումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

**68** **Ստեղծագործությունը համապատասխանեցրե՛ք հեղինակի անվանը։**

Ա. Սոնիա Պալասանյան
Բ. Յուրի Պետրոսյան
Գ. Գևորգ Գևորգյան
Դ. Նորայր Կարգանյան
Ե. Փարավոն Միրզոյան
Զ. Սարգիս Մուրադյան
Է. Էդգար Հովհաննիսյան

1. «Հովհաննես Բաղրամյան» արձան
2. «Զարթոնք» գեղանկար
3. «Գողգոթա» սիմֆոնիկ պոեմ
4. «Անվերնագիր» գեղանկար
5. «Հովհաննես Այվազովսկի» արձան
6. «Միքայել Նալբանդյան» արձան
7. «Ծովակալ Իսակով» արձան
8. «Նատյուրմորտ դաշտային ծաղիկներով» գեղանկար

| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

**69** **Տարեթվերը համապատասխանեցրե՛ք իրադարձություններին:**

Ա. Աքեմենյան տերության բաժանումը վարչական 20 շրջանների
Բ. Բաբելոնի գրավումը Տիգրան Երվանդյանի գլխավորած դաշնակից զորքերի կողմից
Գ. Քսենոփոնի զորքի անցնելը Հայաստանի տարածքով
Դ. Դարեհ I–ի գահակալման ավարտը
Ե. Տիգրան Երվանդյանի գահակալման ավարտը
Զ. Կյուրոս Մեծի զոհվելը
Է. Հայաստանի կողմից Աքեմենյանների գերիշխանության ճանաչումը

1. Ք. ա. 401 թ.
2. Ք. ա. 525 թ.
3. Ք. ա. 520 թ.
4. Ք. ա. 486 թ.
5. Ք. ա. 521 թ.
6. Ք. ա. 529 թ.
7. Ք. ա. 539 թ.
8. Ք. ա. 468 թ.

| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

**70** **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1. 1890–ական թթ. կեսերին հայդուկապետերի մեծ մասն արդեն դաշնակցական էր, ուստի ֆիդայական ջոկատները հիմնականում գործում էին ՀՅԴ հովանու ներքո:
2. Ազգային գործիչ Երվանդ Օտյանի առաջարկությամբ Բեռլինի վեհաժողովին մասնակցելու նպատակով Եվրոպա մեկնող հայկական պատվիրակությունը գլխավորել է Մկրտիչ Խրիմյանը:
3. Իշխան Պապիկ Նորաշխարհյանի ղեկավարությամբ զեյթունցիները թուրքերի դեմ կռվեցին մինչև 1878 թ. վերջը, իսկ Մալաթիայի փաշան շուտով ստիպված էր Պապիկ իշխանին ճանաչել Զեյթունի քաղաքագլուխ:
4. ՀՅԴ ծրագրի «Նպատակ» բաժնում ասվում էր, որ ապստամբության ճանապարհով անհրաժեշտ է հասնել Արևմտյան Հայաստանի ազատությանը, որով այդ փուլում հասկացվում էր հայկական նահանգների անկախության հաստատումը:
5. Հայրենիքից դուրս առաջինը ստեղծվել է Հնչակյան կուսակցությունը:
6. «Որոգայթ փառաց»–ը հայ առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունն է, որը կոչ էր անում հայ երիտասարդությանը՝ ապստամբելու հանուն հայրենիքի ազատագրման: